ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՎԳ/06.3/15141-2026

«ԵՂԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԺՈՐԱՅԻ» ԱՁ-ի ՏՆՕՐԵՆ
ԵՂԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 28084162
Հասցե՝ ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Անդրանիկի 105շ. բն.44
Հեռ. +374 99 38 76 39
Էլ. հասցեն՝ sevakmnacakanyan@mail.ru

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Մնացականյան,

Առողջապահության նախարարության 2026 թվականի կարիքների համար էլեկտրական սարքերի և սարքավորումների (օդորակիչներ, սառնարաններ) վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով «Եղիա Մնացականյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) հետ 07.03.2026 թ. կնքվել է թիվ ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2026/2/2 պայմանագիրը, որի շրջանակներում Կազմակերպությունը պարտավորվել է մատուցել վերոնշյալ ծառայությունները: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Սակայն պայմանագրի կնքման սկզբնական փուլից ի վեր Կազմակերպությունը չի ապահովել ծառայությունների պատշաճ և ժամանակին մատուցումը: Բազմիցս խախտվել են ծառայությունների մատուցման վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները, ինչպես նաև պատշաճ արձագանք չի ցուցաբերվել հեռախոսազանգերին և հաղորդակցություններին:

2026 թվականի ապրիլի 28-ին էլեկտրոնային փոստով Ձեզ ուղարկված հաղորդագրությամբ ներկայացվել էր օդորակիչի վերանորոգման ծառայություն մատուցելու պահանջ, որը ևս Ձեր կազմակերպության կողմից անտեսվել է և սահմանված ժամկետում չի իրականացվել: Միաժամանակ, նշված հաղորդագրությամբ նախազգուշացվել էր, որ պայմանագրային պարտավորությունների հերթական չկատարումը կհանգեցնի Առողջապահության նախարարության կողմից համապատասխան միջոցների ձեռնարկմանը:

Պայմանագրի 2.1.3 կետով՝ գնորդը իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ա)մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանգրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամաբ) կատարելը: Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընքացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանաված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 150 000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2026 թվականի մայիսի 22-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա Կազմակերպությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված բոլոր գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման հանձնարարականների բնօրինակները մինչև 2026 թվականի մայիսի 22-ը ներառյալ ներկայացնել Առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության գնումների համակարգման բաժին (209 սենյակ):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

5/12/2026

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 68027801 00

Կատարող՝ Նելլի Ղազարյան
ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060-80-80-03/1701